ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Վ. Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

Աբովյանի ծննդյան թվականի ճշտման բարդության հիմնական պատճառն այն է, որ նրա ծննդավայր Քանաքեռի եկեղեցիների չափաբերական մատյանները (որտեղ պարտադրաբար գրանցվում էին ծնունդ, ամուսնություն և մահ) չեն պահպանվել։ Հարցի բարդացմանը նպաստել է նաև Աբովյանի ծնողների՝ իրենց անդրանիկ որդու ծննդյան թվականը ստույգ չիմանալու հանգամանքը, որի հետևանքով ինքը Աբովյանը ևս իր տարիքի մասին մոտավորապես է իմացել։ Այդ է եղել պատճառը, որ նա իր ծննդյան թվականի վերաբերյալ այլևայլ առիթներով տարբեր վկայություններ է թողել։

Այդ բոլորին ավելացել է Աբովյանի առաջին կենսագիրների անփույթ վերաբերմունքը ծննդյան թվականի վերաբերյալ։ Այսպես, նրա առաջին կենսագիր Մ. Տեր-Ազարյանը գրել է. «Խաչատուր Աբովյանի ծննդյան տարին մեզ հայտնի չէ։ Ճշմարիտ է, նրա 1846 թ. ծառայության ցուցակը ցույց է տալիս, որ այս թվումը նա եղել է 36 տարեկան, և երևում է, որ նա ծնվել է 1806 թ., սակայն չեմ կարող երաշխավոր լինել սրա ստուգության համար»[1]։ Փաստորեն Տեր-Ազարյանից է սկսվել Աբովյանի ծննդյան թվականի շփոթը, քանի որ նրա ձեռքի տակ եղած աղբյուրը՝ 1846 թ. ծառայության ցուցակը մատնանշել է ոչ թե 1806, այլ՝ 1810 թ.։

Աբովյանի երկրորդ կենսագիր Ն. Տեր-Կարապետյանը, հիմք ընդունելով Աբովյանի՝ իր մասին ընդհանուր ձևով գրած այն վկայությունը, թե «1804—5-ին ծնվեցա ես Քանաքեռ գյուղում», գտնում է, որ Աբովյանը ծնվել է 1804—1805 թթ.[2]։

1914 թ. «Խ. Աբովյանի կյանքի վերջին հինգ տարիները» հոդվածում Ա-Դո-ն, առարկելով Տեր-Կարապետյանին ու Տեր-Սարգսյանին, ինչպես նաև 1811 թ. առաջարկող Ալեքսանդր Երիցյանին, Աբովյանի՝ 1847 թ. կազմված ծառայության ցուցակը համարելով «ճշտագույնը այն բոլոր տեղեկություններից, որ լույս են տեսել Աբովյանի մասին», առաջարկեց 1809 թ.[3]։

1939 թ. երեք ուսումնասիրողներ՝ Ռուբեն Զարյանը, Հրայր Մուրադյանը և Արամ Երեմյանը նույնպես պնդեցին, որ Աբովյանը ծնվել է 1809 թ.[4]։ Նույն թվականին, բայց 1938 թվակիր «Հայ հանրագիտակի» (Պուկրեշ) հա-

---

1 Մ. Տեր-Ազարյանց, Մեկ քանի խոսք Ապովյանի վերա, «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, Թիվ է, հուլիս, էջ 531—553։

2 Տե՛ս Ն. Տեր-Կարապետյան, Խաչատուր Աբովյան, Հեմարանական դիսերտացիա, Տփղիս, 1911, էջ 14—15։

3 Տե՛ս «Նոր հոսանք», 1914, № 5, էջ 759։ «Գործ», 1917, № 5—6, էջ 32—33։

4 Տե՛ս Ռ. Զարյան, Խաչատուր Աբովյան, Երևան, 1939, էջ 8։ Հ. Մուրադյան, Խաչատուր Աբովյան, Երևան, 1939, էջ 8։ Ա. Երեմյան, Գրական-պատմական անճշտություններ, «Հայաստանի կոչնակ», 1939, № 32, էջ 767։

վելվածում, Մկրտիչ Պոտուրյանը, հենվելով Արամ Երեմյանի հոդվածին, Աբովյանի ծննդյան թվականը դարձյալ նշում է 1809 թ. (էջ 541)։

1945 թ. լույս տեսած «Խաչատուր Աբովյանի կենսագրությունը» ուսումնասիրության մեջ, բազմավաստակ աբովյանագետ Երվանդ Շահազիզը, վերակրկնելով Ն. Տեր-Կարապետյանի վարկածը, Աբովյանի ծննդյան թվականը համարում է 1804—1805 թթ.։

1948 թ. ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, գրական-բանասիրական հետազոտությունների երրորդ գիրքը նվիրեց Խ. Աբովյանի «անհայտացման» հարյուրամյակին։ Այստեղ պրոֆ. Ռ. Աբովը, քննադատելով 1809 թ. առաջարկած Ա-Դո-ին և նրան պաշտպանող Ռ. Զարյանին, հայտարարում է, որ Աբովյանի «ծննդյան միակ «հավանական» և ճիշտ թվականը 1804 կամ 1805 թվականն է։ Այս երկու թվականից ամենից ավելի ճշմարտացին պետք է համարել 1805-ը»[5]։ Որպես իր առաջարկած 1805 թ. հիմք, բանասերը վկայակոչում է էջմիածնի Սինոդին 1838 թ. տված խնդրագիրը և Նիկոլայ I-ին գրած դիմումը և ինքնակամ հաշվումներով ստանում 1805 թ.[6]։ Սակայն այն աղբյուրները, որոնք Աբովը վկայակոչում է, իրենց մեջ պարունակում են փաստական անճշտություններ։ Այսպես օրինակ՝ որպես կարևորագույն փաստաթուղթ նա վկայակոչում է «Դիվան Խ. Աբովյանի» առաջին հատորի 193-րդ էջում հրատարակված, 1853 թ. կազմված, Աբովյանի ծառայության ցուցակը և գրում. «Էմիլիա Աբովյանը ծառայության ցուցակը ներկայացնելիս նշում է, որ Աբովյանը անհետացել է 43 տարեկան հասակում։ Իսկ քանի որ Խ. Աբովյանի անհետացման թվականը մեզ հայտնի է, ուստի 1848-ից հանելով 43-ը, կստանանք 1805 թվականը»[7]։

Այստեղ առկա են մի քանի անճշտություններ։ Նախ՝ ծառայության ցուցակը Էմիլիան չի ներկայացրել, քանի որ նա այդ իրավունքը չի ունեցել։ Գործող օրենքներով դիմումը ներկայացնելուց հետո մյուս անհրաժեշտ փաստաթղթերը կազմում էին բարձրագիր իշխանությունները և իրենք էլ ներկայացնում ուր հարկն է[8]։ Այնուհետև, ծառայության ցուցակում նշված «քառասուներեք տարեկանը» վերաբերել է ոչ թե 1848 թ. անհայտացման ժամանակին, այլ ցուցակը կազմելու տարեթվին՝ 1853 թ.։ Ուրեմն ոչ թե 1848-ից պետք է 43-ը հանվի՝ այլ՝ 1853-ից, որի դեպքում ստանում ենք ոչ թե 1805, այլ 1810 թ.։

Ուղիղ քսան տարի հետո՝ 1968 թ. Աբովյանի ծննդյան թվականը վիճաբանության նոր ալիք բարձրացրեց։ Այս անգամ բանավիճողը բանասեր Պիոն Հակոբյանն էր, որը քննադատեց պրոֆ. Ռ. Աբովի առաջարկած թվականի անհիմն լինելը և վերակենդանացրեց 1809 թ.։ Միության տարբեր արխիվներից (Լենինգրադ, Մոսկվա, Տարտու, Թբիլիսի, Երևան), Աբովյանի երկե-

---

5 Տե՛ս «Խաչատուր Աբովյան. գրական-բանասիրական հետազոտություններ», գիրք երրորդ, Երևան, 1948, էջ 207։

6 Տե՛ս Նույն տեղում, էջ 207—209։

7 Նույն տեղում, էջ 211—212։

8 Տե՛ս Свод законов Российской империи (изд. 1842 г.), т. 3, Устав о пенсиях и единовременных пособиях, приложение к статье 173, «Формы спискам сведений, представляемых начальниками губерний министерству юстиций при испрошении пенсии и пособий». Այսուհետև ամենուր վկայակոչվելու է օրենքների ժողովածուի 1842 թ. հրատարակությունը։

րից, պաշտոնական վավերագրերից ու ժամանակակիցների վկայություններից մեծ ժրաջանությամբ Աբովյանի ծննդյան թվականի վերաբերյալ փաստերի հավաքման տեսանկյունից Հակոբյանի ուսումնասիրությունը գերազանցում է իր բոլոր նախորդներին: Նրա «Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը» ծավալուն մենագրության մեջ (էջ 48—71) քննարկման են ենթարկված Աբովյանի ծննդյան թվականին վերաբերող տվյալները, դրանց հարակից ու լրացուցիչ տեղեկությունները և այլն:

Քննարկենք Հակոբյանի վկայակոչած մի շարք փաստերը:

Թիֆլիսի ռազմական նահանգապետ Ստրեկալովը Պասկևիչին գրած զեկուցագրում, 1830 թ. հունվարի 16-ին Աբովյանի մասին գրել է՝ «20-тилетний молодой человек»: Այս առաջին վկայությունից Հակոբյանը եզրակացնում է. «(20 տարեկան երիտասարդ), ուստի 1809 թ. վերջերի ծնված»[9]:

Մեր կարծիքով փաստից արված եզրակացությունը սխալ է: Հայտնի է, որ Աբովյանի ժամանակ առհասարակ ծննդյան թվականի մատնանշում չկար: Պաշտոնական բոլոր փաստաթղթերում տարիքի մասին հարցադրումը ձևակերպված էր «лета от роду» ձևով, այսինքն՝ տարիքը ծննդյան ժամանակվանից: Այս երևույթը Հակոբյանին հայտնի է, և նա ճիշտ կերպով բացատրում է. «երբ ասվում էր, որ մեկն, ասենք, 21 տարեկան է, ապա նշանակում էր, որ նրա 21 տարին արդեն լրացած է»[10]:

Ասել է թե, այսպիսի ընդհանուր հաշվումների պայմաններում տարիքի որոշման վճռական դերը տարեվերջն ու տարեսկիզբն էին, այսինքն՝ եթե 1829 թ. դեկտեմբերին տվյալ անձը ծննդյան ժամանակվանից հաշված 19 տարեկան էր, ապա 1830 թ. հունվարին նա արդեն 20 տարեկան էր հաշվում, քանի որ ծննդյան ամիս ու ամսաթիվ գոյություն չուներ: Այս առումով 1830 թ. հունվարի 16-ին հայտնված «20-ամյա երիտասարդի» ծննդյան թվականը կստացվի 1810 թ. և ոչ թե՝ «1809 թ. վերջեր»[11]:

Երկրորդ փաստարկը 1830 թ. փետրվար-մարտ ամիսներին Նիկոլայ I-ին Աբովյանի գրած խնդրագրում «Հասակ իմ քսանամյա գոլով» վկայությունն է, որից Հակոբյանը եզրակացնում է. «ուստի՝ 1809 թ. վերջերի ծնված»[12]: Իրականում մենք գործ ունենք 1810 թ. հետ:

Երրորդ փաստարկը Աբովյանի մասին Ֆ. Պարրոտի 1830 թ. մարտի 3-ին գրած կարծիքի մեջ «20-ամյա երիտասարդ» վկայությունն է, որից Հակոբյանը եզրակացնում է. «ուստի՝ 1809 թ. վերջերի ծնված»[13]: Սակայն այս փաստարկը դարձյալ 1810 թ. օգտին է խոսում:

Ֆ. Պարրոտն իր «Ուղևորություն դեպի Արարատ» գրքում նկարագրելով 1829 թ. սեպտեմբերի 27-ին Արարատի գագաթ բարձրանալը, Աբովյանի մասին գրել է. «սարկավագը, թեև հազիվ 20 տարեկան»[14]:

Այս վկայությունից Հակոբյանը եզրակացնում է. «ուստի ծնված 1809 թ. նոյեմբեր ամսից ոչ առաջ»: Այնուհետև նա գրում է. «Իր հնությամբ Աբով-

---

9 Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, Երևան, 1967, էջ 53: Տարեթվերի բոլոր ընդգծումները տեղինակինն են:

10 Նույն տեղում, էջ 52:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 53:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում:

յանի տարիքը մատնանշող այս առաջին վկայությունից մի եզրակացություն կարելի է հանել. այն էլ՝ խիստ ծանրակշիռ. Խ. Աբովյանը, անպայմանորեն ծնված պետք է լինի 1809 թ. աշնանը, հոկտեմբեր ամսից ոչ առաջ, քանի որ, Պարրոտի վկայությամբ՝ սեպտեմբերի 27-ին նրա 20 տարին դեռ լրացած չէր (ինչպես հետո կտեսնենք, այս թվականն ամենաճիշտն է)։ Մենք ոչ մի հիմք և իրավունք չունենք չհավատալու Ֆ. Պարրոտին, քանի որ նա իր տվյալները քաղել է անձամբ Աբովյանից, իսկ վերջինս 1829 թ. իր տարիքը պետք է որ ավելի լավ իմանար, քան նրանից հարյուր տարի հետո եկող գիտունները»[15]։

Բայց միթե պարզ չէ, որ եթե 1829 թ. սեպտեմբերի 27-ին Աբովյանի «20 տարին դեռ լրացած չէր», ապա այդ թվականին Աբովյանը 19 տարեկան էր, իսկ դա նշանակում է, որ նա ծնվել է 1810 թ. և ոչ թե 1809 թ. աշնանը։

Բանասերը այնուհետև գրում է. «Խնդամիտ զգացմունք» բանաստեղծությունն, օրինակ, թեպետ Աբովյանի վկայությամբ հորինված է 1826 թ. «ի վեշտասան հասակի իւրում», որ նշանակում է, թե 1826 թ. Աբովյանն իրեն տասնվեցամյա պատանի է համարել, հետևապես ծնված՝ 1809 թ. վերջերին կամ 1810 թ. սկզբներին, և իրականում էլ այդպես է, բայց այս վկայության վրա չենք հենվի, որովհետև մեր մասնավոր հետազոտությունները պարզել են, որ այդ ոտանավորը 1828 թ. առաջ չէր կարող գրված լինել»[16]։ Ուրիշ խոսքով՝ Աբովյանի վկայությունը ճիշտ չէ և այս դեպքում «հիմք ու իրավունք ունենք չհավատալու» նրան։ Ավելորդ կասկածամտություն։ Չէ՞ որ Հակոբյանը նույն տողերից հինգ էջ առաջ, իր 13-րդ փաստարկում, հենվելով Աբովյանի այդ վկայությանը, ճիշտ եզրակացության էր հանգել «Ուստի 1810 թ. ծնված»[17]։

«Խնդամիտ զգացմունք» բառերով սկսվող բանաստեղծությունն Աբովյանը նվիրել է կոմս Պասկևիչին, որտեղ նրան «Հայր Հայաստանի», «այն մեր ազգի» է կոչում, իսկ հետագայում այն անվանել է իր «այն ժամանակվա զգացումների մանկական թոթովանքներ» և, միաժամանակ վկայել, որ ինքը այդ բանաստեղծությունը իր մոտ պահում է որպես սրբություն[18]։

Հիրավի, Աբովյանի արխիվում պահպանվել են այդ բանաստեղծության չորսից ավելի օրինակներ, որոնցից երկուսը Աբովյանի գեղեցիկ ձեռագրով վերնագրված է՝ «Խնդամիտ զգացմունք երախտագետ հայկազնո վասն ազատութեան հայրենեաց իւրոց ասացեալ յԵրևան յամի 1826 ի վեշտասան հասակի իւրում»[19], իսկ մյուս՝ 1831 թ. փեբրվարի 1-ին արտագրած օրինակի վրա «ասացեալ» բառից հետո ավելացրել է՝ «ի նոյն իսկ յԵրևան յամի 1826 ի վեշտասան հասակի իւրում»[20], որ նշանակում է դարձյալ Երևանում ասված կամ գրված։

Արարատի գագաթը բարձրանալու կապակցությամբ Շոպենի սկսած բանավեճի պատճառով, 1831 թ. օգոստոսի 18-ին, Դորպատի գավառա-

15 Նույն տեղում, էջ 60։
16 Նույն տեղում, էջ 59, տողատակ։
17 Նույն տեղում, էջ 54։
18 Տե՛ս երկ, հատ. 10, էջ 258։
19 Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Խ. Աբովյանի արխիվ, № 55, էջ 77։
20 Նույն տեղում, № 81։

յին դատարանում վկայություն է տալիս նաև Աբովյանը։ Հարցաքննության ժամանակ իր տարիքի մասին նա պատասխանում է, որ քսաներկու տարեկան է։ Բայց տուն գնալուց հետո նորից դատարան է վերադառնում և հայտարարում, որ ինքը 21 տարեկան է, ուստի՝ 1810 թ. ծնված։ Այդ մասին. կազմված դատարանի արձանագրությունը ՍՍՀՄ կենտրոնական պատմական արխիվից առաջինը Պ. Հակոբյանն է հայտնաբերել և «Պատմա-բանասիրական հանդեսի» 1960 թ. № 2-ում (էջ 104) գրել, որ Աբովյանի հարցաքննությունը տեղի է ունեցել 1831 թ. օգոստոսի 18-ին։ Բայց ահա իր փաստարկների 4-րդ կետում իրական փաստը մեկ տարով «փոքրանում» և դառնում է 1830 թ. օգոստոսի 18։

Մյուս փաստարկը 1830 թ. Դորպատում կազմված հարցաթերթիկն է, որտեղ Աբովյանը վկայել է, որ վանք է տարվել ինը տարեկան հասակում, այնտեղ մնացել վեց տարի, Թիֆլիսում սովորել մեկուկես տարի և երեք տարի անց հանդիպել Պարրոտին։ Սրանից Հակոբյանը հաշվումներ է անում և Պարրոտին հանդիպման տարվանից՝ 1829-ից 19,5 հանելով, ստանում 1809 թ. վերջերին կամ 1810 թ. սկզբներին ծնված։ Եթե 1809 թ. վերջերին ծնված լինելը մի կերպ հասկանալի է, ապա «1810 թ. սկզբներին» լրիվ անհասկանալի է, որովհետև հոկտեմբերի 15-ը երբեք տարվա սկիզբ չի համարվել։

Պնդելով, թե իր բերած 44 վկայություններից 26-ը (այսինքն՝ ճնշող մեծամասնությունը) աներկբայորեն հաստատում են, որ Աբովյանը ծնվել է 1809 թ., այդ թվականին նախապատվություն տալու համար Հակոբյանը ամենամենայնիվ հարկ է համարել ընդհանուրից անջատել չորս «ամենաշանրակշիռ» վկայություններ և ընդգծել դրանք[21]։ Չորսից երկուսի մասին վերը խոսվեց։ Մյուս երկու վավերագրերի անջատումն ու ընդգծումը իբրև 1809 թ. հաստատող փաստարկներ, նույնպես կասկածելի են, քանի որ ընդհանուր փաստարկներում իր կողմից ընդունված և որոշակիորեն 1810 թ. օգտին խոսող 10-րդ վկայության մասին այստեղ ասված է. «ուրեմն՝ ծնված դարձյալ 1809 թ. վերջերից ոչ առաջ, թերևս 1810 թ. սկզբներին», իսկ դարձյալ որոշակիորեն 1810 թ. օգտին խոսող 35-րդ վկայության մասին նա գրել է. «Ըստ այդ վավերագրերի՝ անհայտացման ժամանակ, այսինքն՝ 1848 թ. ապրիլի 2-ին. Աբովյանը եղել է 38 տարեկան, իսկ դա նշանակում է, որ ծնված է եղել 1809 թ. վերջին ամիսներին, կամ 1810 թ. սկզբներին, բայց ոչ երբեք դրանից առաջ»[22]։ «1809 թ. վերջերին կամ 1810 թ. սկզբներին» ձևակերպումը կարող է միայն մի դեպքում ճիշտ լինել՝ եթե ստույգ հայտնի է, որ Աբովյանը ծնվել է 1809 թ. դեկտեմբերի վերջին օրերին և առկա է հին ու նոր տոմարների տարբերությունը։ Բայց այդ մասին գրավոր վկայություններ չկան։

Աբովյանի ժամանակ երկրում մտցված էր անձնագրային համակարգ, ըստ որում, տարիք ապացուցող անժամկետ անձնագիր տրվում էր ոչ բոլորին, այլ պետական ծառայության մեջ գտնվող հանդեպ հավատարմություն ցուցաբերածներին։ Այդ իմաստով անձնագիրը հանդիսանում էր ոչ միայն

21 Տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 59—63։

22 Նույն տեղում, էջ 63։

քաղաքացու ինքնությունը, ազգությունը, դբաղմունքը, ընտանեկան դրությունը ապացուցող հիմնական փաստաթուղթ, այլև միապետի հանդեպ ցուցաբերած հավատարիմ հպատակի բնութագիր։ Անժամկետ անձնագիրը տրվում էր տվյալ ծառայողի անմիջական պետի կողմից, որպես ծառայության մեջ մտնելու ժամանակ հանձնված բոլոր փաստաթղթերին փոխարինող վկայական։ Այդ փաստաթուղթը կոչվում էր վկայագիր կամ անժամկետ անձնագիր (аттестат или бессрочный паспорт), որով ստացողին, այսինքն՝ վկայագրվածին, ատեստավորվածին, իբրև փորձված, հավատարիմ անձի, իրավունք էր տրվում կայսրության ցանկացած վայրում բնակվել։ Այդպիսի անձնագիրը աստիճանավորներին էր տրվում ծառայությունից ազատման իսկ ժամանակ կամ այլ գործի անցնելու կապակցությամբ[23]։

Անժամկետ անձնագիրը կամ վկայագիրը միաժամանակ ծառայում էր որպես ստացողի ու նրա ընտանիքի ազնվականական իրավունքները ապացուցող, երեխաներին գիմնազիաներում ու բուհերում սովորելու արտոնություն տվող, թոշակ ստանալու և ազնվականներին արտոնված այլ իրավունքներ ապացուցող փաստաթուղթ։

Իսկ ի՞նչ կարգ էր սահմանված նրանց համար, ովքեր չէին վկայագրվում (ատեստավորվում)։ Օրենքը չվկայագրված աստիճանավորների ու նրանց ընտանիքների համար հիմնական փաստաթուղթ էր սահմանել ծառայության ցուցակը։ Այդ պատճառով էլ ծառայողի ընտանիքը, որպես թոշակ ստանալու վկայական, պետք է ներկայացներ կամ աստիճանավորի վկայագիրը, կամ նրա մահվան վկայականը և կամ ծառայության ցուցակը[24]։ Այսպիսի կարգի պայմաններում ծառայության ցուցակի առկայությունն իսկ, առանց լրացուցիչ տեղեկությունների, տվյալ պաշտոնյային հայտնի էր դարձնում, որ ինքը գործ ունի չվկայագրված աստիճանավորի կամ նրա ընտանիքի հետ։

Աբովյանին վերաբերող պաշտոնական բոլոր փաստաթղթերում (այդ թվում և ծառայության ցուցակներում) գրված է, որ նա ազատվել է իր զբաղեցրած ուսուցչի և հասարակաց տեսչի պաշտոններից։ Գործող օրենքներով սա նշանակում էր, թե նա ծառայությունից չի ազատվել, այլ միայն պաշտոնից, և նրա անմիջական ղեկավարությունը իրավունք ուներ նրան այլ տեղ ծառայության ուղարկելու։ Այս է եղել պատճառը, որ թեև 1848 թ. մարտի 9-ին Աբովյանին ուղարկված ազատման ծանուցագրում նրա անմիջական պետ, փոխարքայության ուսումնական մասի կառավարիչ Սեմյոնովը գրել է, թե իբր նրան ազատում է ծառայությունից, բայց օրենքով նախատեսվող վկայագիր չի ուղարկել Աբովյանին։ Ահա թե ինչու այդ գրությունը ստանալուց հետո (մարտի 15-ից) Աբովյանն ընկել է հոգեկան տանջանքի մեջ և թախիծը պատել է նրան[25]։ Չէ՞ որ աշխատանքից ազատելու պատրվակը նրան Թիֆլիսի Ներսիսյան դպրոց փոխադրելն էր, որի դեպքում նույնպես պարտադիր էր վկայագրի ուղարկումը, եթե, իհարկե, նա վկայագրված էր համարվում։ Վկայագիր չստանալու փաստից Աբովյանը հասկացել էր, որ ինքը ենթակա է պատժի և հենց այդ պատճառով էլ ընկել էր մտատանջության մեջ։

---

23 Մանրամասնությունները տե՛ս Свод законов, т. 3, Устав о службе по определению от правительства, статья 1395 և հտ.։

24 Տե՛ս Свод законов, т. 3, Устав о пенсиях и единовременных пособиях, статья 156.

25 Տե՛ս Էմիլիա Աբովյանի վկայությունը, Խ. Աբովյանի արխիվ, № 593։ Հմմտ. «Դիվան Խ. Աբովյանի», հատ. 2, Երևան, 1948, էջ 267։

Ավելին, հետագայում, «անհայտանալուց» հետո, երբ խնամակալները Բուրքեստանովի միջոցով 1848 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսի բարձրագույն իշխանություններից պահանջել են Աբովյանի վկայագիրը[26], դրա փոխարեն նրանց ուղարկվել է, ուսումնարանների դիրեկտորի կողմից վավերացված, Աբովյանի 1848 թ. ծառայության այն ցուցակը, որ նրա ժառանգներից Վիկտորյա Աբովյանը հանձնել է գրականության ու արվեստի թանգարանին (պահվում է լրացուցիչ ցուցակով, 85 թվահամարի տակ)։ Բացի ծառայության այս ցուցակից, կան նաև երկու այլ պատճեններ, որոնք հանվել են Թիֆլիսի դիրեկցիայում պահվող՝ Աբովյանի ծառայության իսկական ցուցակից և հաստատվել Անդրկովկասյան ուսումնարանների դիրեկցիայի կողմից։

Աբովյանի ծննդյան թվականի ճշտման տեսակետից, վավերացված այս պատճեններից յուրաքանչյուրի դերը անգնահատելի է հետևյալ առումով։

Նշվեց, որ աստիճանավորին վկայագիր տալով այլևս նրան չէր վերադարձվում ծառայության մեջ մտնելու ժամանակ պահանջվող և նրա կողմից ներկայացված ոչ մի փաստաթուղթ։ Ասացինք նաև, որ վկայագրին փոխարինում էր ծառայության ցուցակը։ Իսկ օրենքով ծառայության մեջ մտնելու ժամանակ կրթության և այլ փաստաթղթերից բացի պահանջվում էր նաև չափաբերական մատյաններից գրավոր վկայական տարիքի մասին, ավելի ստույգ՝ ծննդյան ժամանակի կամ թվականի մասին[27]։ Այս օրենքը Պետական կոմիտեի կողմից ընդունվել էր 1831 թ. հունվարի 31-ին, իսկ 1835 թ. հոկտեմբերի 7-ին նույն կոմիտեն ընդունել էր մի օրենք ևս, որ այն անձինք, ովքեր ծնվել են 1831 թ. հունվարի 31-ից առաջ և հնարավորություն չունեն չափաբերական մատյաններից գրավոր վկայական բերել, պետք է այդպիսիք բերեն խոստովանեցման գրքերից։ Մի խոսքով, օրենքը ծառայության մեջ մտնողից պարտադրաբար գրավոր վկայական է պահանջել իր ծննդյան թվականի կամ տարիքի մասին[28]։

Հայտնի է, որ Աբովյանը ծառայության է մտել 1837 թ. փետրվարի 12-ին։ Ուրեմն այդ թվականին էլ Անդրկովկասյան ուսումնարանների դիրեկցիայում կազմվել է նրա ծառայության իսկական այն ցուցակը, որից հետագայում վավերացված պատճեններ են հանվել։ Իսկ այդպիսի ցուցակ կազմելը պարտադիր է եղել, քանի որ դիրեկցիայից բացի նոր աստիճանավորության մեջ մտնողի մասին ծառայության ցուցակներ պետք է ուղարկվեին նաև հերոլդիային՝ ազնվականության շարքը դասելու համար (1846 թ. հետո հերոլդիայի փոխարեն ուղարկվում էին հրամանգչական դեպարտամենտ), լուսավորության մինիստրության դեպարտամենտին, արդարադատության և ֆինանսների մինիստրություններին։

Որ 1837 թ. դիրեկցիայում կազմված Աբովյանի ծառայության իսկական ցուցակում, խոստովանեցման մատյանից (քանի որ չափաբերականից լինելու

---

26 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 1726, թ. 22։

27 Տե՛ս Свод законов, т. 3, Устав о службе по определению от правительства, статья 394.

28 Այսպես, Նղնախի գավառական ուսումնարանի ուսուցիչ Իվան Սկիբինսկին 1837 թ. ծառայության ընդունվելու ժամանակ մյուս փաստաթղթերի հետ ներկայացրել է նաև ծննդյան ու մկրտության մասին վկայական (տե՛ս ՎՊԿՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 4864, թ. 41), իսկ ուսուցիչ Ֆիլիսոնովից չափաբերական մատյանից վկայական պահանջելու վերաբերյալ 1842 թ. 23 թերթանոց գործ է ստեղծվել (տե՛ս ՎՊԿՊԱ. ֆ. 422, գ. 19532, էջ 22ա, N 247)։

դեպքում ինքը ստույգ կիմանար) նրա բերած գրավոր վկայականի հիման վրա նրա ծննդյան տարեթիվը գրված է եղել 1810 թ., ապացուցվում է նաև այն փաստով, որ նույն 1837 թ. սեպտեմբերին գրված Անդրկովկասյան ուսումնարանների տարեկան հաշվետվության մեջ Աբովյանի տարիքի դիմաց գրված է «27 տարեկան»։ Այստեղ սխալվելն ու թյուրիմացությունը բացառվում են, որովհետև որ թվականին նա մտել է ծառայության մեջ, այդ տարին էլ գրվել է հաշվետվությունը։

1810 թ. անկասկածելի է նաև այն առումով, որ իսկական ծառայության ցուցակից հանված և վավերացված երեք պատճեններն էլ միաձայն այդ թվականն են հաստատում։ Աբովյանի ծառայության իսկական ցուցակը չունենալու պատճառով, վավերացված այդ պատճեններից յուրաքանչյուրը բնագրի արժեք է ստանում։ Ահա այս պատճեններից երկուսը, իբրև թե իրար կրկնող։ Հակոբյանը տեղավորել է իր փաստարկների 35-րդ կետում։

Պատճեններից առաջինը, ինչպես վերը նշեցինք, Աբովյանի վկայագրի փոխարեն Թիֆլիսից նրա երեխաների խնամակալներին ուղարկվածն է, որ պետք է եղել հենց խնամակալական գործերի համար։ Երկրորդ պատճենի լուսանցքում դրված է՝ «№ 1600», իսկ ներքևում կարդում ենք. «Копия сего формулярного списка, во всем прописанном с подлинным таковым, имеющимся при делах Тифлисской дирекции училищ, верна и следствие прошении жены коллежского ассессора Эмилии Абовьян, от 31 августа 1854 г. выдана ей для представлении начальству Закавказского девичьего института при определении в оной дочери ее Аделанды (Зармане), в том подписал и приложением казенной печати удостоверяю. Г. Тифлис, сентября 7 дня 1854 г. Директор училищ Тифлисской губернии статский советник (подпись)»[29].

Այժմ վերընթեռնենք Հակոբյանի 35-րդ փաստարկը։ Այնտեղ ասված է. «Աբովյանի անհայտացումից հետո՝ 1848 թ. կազմված ծառայության ցուցակը։ Նշված է, որ անհայտացման ժամանակ Աբովյանը եղել է «38 лет», ուստի 1809 թ. վերջերին ծնված։ Այդ ցուցակից 1854 թ. օգոստոսի 31-ին հանված պատճենը ևս կրկնում է նույնը՝ «Тридцати восьми лет» (38 տարեկան) կամ 1809 թ. վերջերի ծնված»[30]։

Սույն փաստարկի մեջ բացահայտ անճշտություն կա։ Նախ՝ առաջին ցուցակը ոչ թե 1848 թ. է կազմվել, այլ բնագրից 1848 թ. հանված պատճենն է, որի տակ պարզ գրված է. «Верно с подлинником, исправляющий должность директора Зайцев (подпись)»[31]. Երկրորդ, 1854 թվականինը ոչ թե այդ պատճենից հանված պատճենն է, այլ՝ Թիֆլիսյան ուսումնարանների դիրեկցիայում պահվող 1848 թ. կազմված ծառայության ցուցակի, ըստ որում, պատճենը հանվել է ոչ թե օգոստոսի 31-ին, այլ այդ օրը Էմիլիա Աբովյանի դրած դիմումի հիման վրա 1854 թ. սեպտեմբերի 7-ին։ Վերջապես, 1848-ից հանած 38=1810։

Սակայն անցնենք Աբովյանի ծառայության ցուցակի այն բնագրին, որը վերոհիշյալ պատճենների հիմքն է եղել։ Հիրավի, որտե՞ղ այն կարող է լինել։

Պատճեններից մեկից տեղեկանում ենք, որ այն պահվելիս է եղել Թիֆ-

29 Խ. Աբովյանի արխիվ, № 86։
30 Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 57։
31 Խ. Աբովյանի արխիվ, № 85։

լիսյան ուսումնարանների դիրեկցիայում։ Քանի որ նախկին Անդրկովկասյան ուսումնարանների դիրեկցիայի գործերը հանձնվել են նորաստեղծ Թիֆլիսյան դիրեկցիային, ապա, հավանաբար, այստեղ են պահվելիս եղել նաև Աբովյանին վերաբերող փաստաթղթերը։

Վրաստանի կենտրոնական պատմական արխիվում պահվում է տարբեր դավառական ուսումնարանների դիրեկցիաներին պատկանող 1838—1858 թթ. գործերի մի ցուցակ։ Դրա 525 թվահամարի տակ գրված է. «Գործ N 72. Երևանի գավառական ուսումնարանի հաստիքավոր տեսուչ, անհայտ կորած Աբովյանի, Թուրքեստանովին տեսչի պաշտոնակատար նշանակելու և սույն ուսումնարանի համար կահույք պատրաստելու մասին»։ «Թերթերի քանակը» սյունակում գրված է. «105», «նշումներ» սյունակում՝ «Ոչնչացնել»[32]։

Սա միակ ուղղակի վկայությունն է այն մասին, որ Աբովյանի «անհայտացման» վերաբերյալ 105-թերթանոց և 72 համարով «Գործ» է եղել ստեղծված, որը 1858 թ. ոչնչացվել է։ Զպետք է մոռանալ, որ 1858 թ. լրացել էր Աբովյանի «անհայտացման» 10 տարին։ Քաղաքացիական օրենսգրքի հոդվածներից մեկը սահմանում էր, որ եթե անհայտ բացակայողը մինչև տաս տարին լրանալը հայտնվում և ապացուցում է սեփականատիրական իր իրավունքները, ապա դրանք տրվում են իրեն։ Հաջորդ հոդվածը սահմանում էր, որ ով տասնամյա ժամկետում չի հայտնվում ժառանգությունը ստանալու համար, ապա նա ընդմիշտ զրկվում է դրանից[33]։

Չի՞ կարելի արդյոք ենթադրել, որ Աբովյանի «անհայտացման» մասին 105 թերթանոց «Գործը» տաս տարի պահպանվել, ապա և տասը տարին լրանալուց հետո ոչնչացվել է՝ անհայտ բացակայողներին վերաբերող սույն հոդվածների հիմունքներով։

Մեր կարծիքով անկասկած է, որ Աբովյանի ծառայության իսկական ցուցակը, որից հետագայում պատճեններ են հանվել, եղել է հենց այդ ոչընչացված «Գործում»։

Եվս մի փաստ։ Դա նույնպես վերաբերում է Աբովյանի տարիքին։ Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ ընտանիքին թոշակավորելու կապակցությամբ ներկայացված ծառայության ցուցակի պատճենի մեջ 1853 թ. Աբովյանի տարիքը գրվել է 43, իսկ 1854 թ. հանված պատճենի մեջ՝ 38։ Կարծում ենք, որ դրա բացատրությունը պատճեններից յուրաքանչյուրի պահանջման նպատակի մեջ է, այսինքն՝ թե ինչ նպատակով է հանվել այս կամ այն պատճենը։

1854 թ. պատճենը հանվել է Աբովյանի դստեր՝ 11-ամյա Ադելաիդա-Զարմանդուխտին Անդրկովկասյան օրիորդաց ինստիտուտ ընդունելու անհրաժեշտությամբ։ Այդ նպատակի համար պետք են եղել տեղեկություններ միայն երեխայի ազնվականական կացության, ծննդյան վկայականի և մկրտության մասին։ Քանի որ պահանջվող բոլոր տեղեկություններն էլ եղել են Աբովյանի 1848 թ. ծառայության ցուցակում, այդ պատճառով էլ հանվել է դրա պատճենը։ Աբովյանի տարիքի մասին տեղեկությունը տվյալ առիթով պետք չի եղել։

---

32 Տե՛ս ՎՊԿՊԱ, ֆ. 422, գ. 19532. թ. 52ա։

33 Свод законов, т. 10, статья 1027, 1028.

Այլ է թոշակ կամ միանվագ նպաստ տալու հարցը, որտեղ պահանջվել է բոլոր տեղեկությունների խիստ ստուգություն։ Չէ՞ որ բացառիկ բնույթի հետևանքով, բարձրագույնին ներկայացնելուց առաջ, Աբովյանի ընտանիքի թոշակավորման բոլոր փաստաթղթերը պետք է ստուգման ներկայացվեին լուսավորության մինիստրությանը, իսկ մինիստրների կոմիտե մտցնելուց առաջ՝ արդարադատության և ֆինանսների մինիստրություններին։ Ավելացնենք նաև, որ հենց արդարադատության մինիստրությանը ներկայացվող տեղեկությունների ծանոթագրության մեջ է պահանջվել, որ ծառայության ցուցակում տարիքի մասին պետք է նշել «сколько имел лет от роду в день его смерти».

Ահա այսպիսի պայմաններում կազմված Աբովյանի 1853 թ. ծառայության ցուցակի պատճենի մեջ նրա տարիքի մասին գրված է «քառասուն երեք տարեկան»։

Իր հավաստիության ու ստուգության բնույթով միայն այս վկայությունը բավարար է ասելու, որ Աբովյանը ծնվել է 1810 թ.։

ГОД РОЖДЕНИЯ ХАЧАТУРА АБОВЯНА

В. Дж. ГАЗАРЯН

(Резюме)

Вопрос о дате рождения Х. Абовяна до сих пор считается спорным вследствие того, что церковные метрические книги села Канакер, где родился писатель, не сохранились. Кроме того, в 1858 г. было уничтожено «Дело № 72» из 105 листов, содержавшее документы, относившиеся к службе Абовяна, в числе которых, по всей вероятности, находилось и письменное свидетельство о его рождении. В статье утверждается, что дошедшие до нас три заверенные копии формулярного списка Абовяна (подлинник которого, должно быть, находился в уничтоженном «Деле № 72»), каждая из которых может заменить оригинал, свидетельствуют, что Абовян родился в 1810 г.